ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՍՏԵՓԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Ստեփան Ծատուրյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ), 2021թ. փետրվարի 15-17-ը:

4. Հրավիրող կողմը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ):

5. Գործուղման նպատակը.

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ-պետությունների թվային օրակարգի իրականացման հարցերով կոմպետենցիաների կենտրոնների գործունեության և համագործակցության թեմայով ԵԱՏՄ հանդիպում:

6. Քննարկված թեմաները.

ԵԱՏՄ հանդիպման ընթացքում քննարկվել են Միության անդամ-պետությունների թվային օրակարգի շրջանակում վերջիններիս կոմպետենցիաների կետրոնների համագործակցության հնարավորությունները, ինչը կարևոր է մինչև 2025 թվականը պետությունների թվային օրակարգերի իրականացման տեսանկյունից:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ թվային օրակարգի 2-րդ փուլի անցման հնարավորությունները և մանրամասները, ինչպես նաև մինչև 2025թ. ԵԱՏՄ ռազմավարական ուղություններով նախատեսվող ծրագրերը: Միաժամանակ քննարկվել են էլեկտրոնային համակարգերի փոխգործելիության հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Փետրվարի 16-ին հանդիպում է կայացել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության

նախարարի տեղակալ Ստեփան Ծատուրյանի և ԵԱՏՄ Կոլեգիայի անդամ (նախարար) Գեղամ Վարդանյանի միջև: Կողմերը կարևորել են նմանատիպ հանդիպումների կարևորությունը:

Գեղամ Վարդանյանի հետ քննարկվել են ԵԱՏՄ թվային օրակարգի շրջանակներում Հայաստանում կոմպետենցիաների կենտրոնի ստեղծման հնարավորությունները, ուղիները և տեխնիկական մանրամասները: Անդրադարձ է կատարվել ՀՀ Թվայնացման ռազմավարությանը, որն արդեն հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, և մինչև 2025թ. միջոցառումների ծրագրին, որը համահունչ է ԵԱՏՄ թվային օրակարգին: Նշվել է, որ Թվային օրակարգի հաստատումը մեծ հնարավորություն է տալիս՝ ԵԱՏՄ անդամ-պետությունների հետ ավելի արդյունավետ համագործակցելու համար:

Փետրվարի 17-ին հանդիպում է կայացել ԵԱՏՄ ՏՏ դեպարտամենտում, որտեղ ցուցադրվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի կողմից մշակված ծրագրային և ապարատային համալիրն ու տվյալների պաշտպանության մեխանիզմները: Հետագայում համալիրը փոխանցվելու է ԵԱՏՄ անդամ-պետություններին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ստեփան Ծատուրյանը առաջարկել է կոմպետենցիաների կենտրոնի ստեղծման վերաբերյալ քննարկումներում և աշխատանքներում ներգրավել նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության համապատասխան մասնագետներին, ինչի վերաբերյալ հետագա գործողություններն իրականացվելու են աշխատանքային կարգով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Ս. ԾԱՏՈՒՐՅԱՆ
22.02.2021թ.